պատմական հայ ռամիկի (ժողովրդի) Մագուայ խառնուխիւնների մէջ գտնուած ժողովրդի հետ:

Առ այժմ թոյլ տուէք ինձ նորա աշխարհագրական դրից վերայ մի համառօտ հայեացք ձգել: [illegible]

Իմ ճանապարհորդած աշխարհը հնում բաժանվում էր երեք գաւառների, որք են՝ Գոգ-Հովիտ, Վարաժնունիք և Արտազ: Առաջինը գտնվում է Արարատեան նահանգի մէջ և այժմ բաժանված է երեք տէրութեան սահմանագլխների. երկրորդը գտնվում է Տուրուբերան նահանգի մէջ, որի մեծ մասը Տաճկաստանին է միացած. երրորդը բոլորովին Վարաժնունեաց փոքրիկ մասի յետ պատկանում է Պարսկաստանին:

վածները ստորերկրեայ աշխատանքով քաւել են իւրեանց յանցանքները: Գետաբեկի շուրջը մինչև 7 հին ժամանակում մշակված պղնձի հանքահորեր կան: Խորենացին միայն Արտաշէս Բ թագաւորութեան ժամանակին է նուիրում արուեստից վերաբերութեամբ մի քանի համառօտ անորոշ տողեր. «Արուեստից գիտութիւն որ ինչ յաւուրս Արտաշիսի» խորագրի տակ, որոնք ընդօրինակում եմ այստեղ: «Զի թէպէտ և զայլն ամենայն զոր ինչ յիշատակեցաք յառաջագոյն ճառիցն, կարգ և սովորութիւնք գեղեցիկք հաստատեցան 'ի Վաղարշակայ և յայլոց առաջնոց թագաւորացն, այլ 'ի մեծամեծ արուեստից և 'ի գիտութեանց ունայնացեալք էին, որպէս հինից և ասպատակայ պարսպեալք, և այսպիսի գիտութեանց կամ անփոյթ արարեալք և կամ ոչ հասեալք. զաղաթուց ասեմ